«ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ
ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ
N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ
1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ՝ Ա. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

2023 թ.

Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի կարևորագույն ռազմավարական խնդիրն է, քանզի կրթության գերնպատակը անձի կայացումն է: Միևնույն ժամանակ դաստիրակությունը պետության պարտավորությունն է իր քաղաքացիների առջև՝ ապահովելու անձի լիարժեք զարգացումն ու ինքնադրսևորումը:

Դաստիարակության նպատակն է՝ ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ազատ և համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ և քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորումը:

Դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա 1- ին կիսամյակի աշխատանքային ընթացիկ գործունեությունը դաստիարակչական գծով սկսել ենք նորմատիվաիրավական բազայի հիման վրա՝առաջնորդվելով ՊՈԱԿ կանոնադրությամբ սահմանված իրավասություններով և պատասխանատվությամբ:

2023 -2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները նպաստել են՝

- **կրթության հիմքի վրա ձևավորված մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների հետագա զարգացման ապահովմանը,**
- **քննադատական մտածողության զարգացմանը,**
- **մասնագիտական կողմնորոշման ապահովման և պարզ աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը,**
- **դրական վարքի ու բարեկիրթ վարվեցողության, կայուն և զարգացած արժեքային համակարգի ձևավորմանը,**
- **բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի հիմքերի ամրապնդմանը,**
- **հայրենիքի պաշտպանությանը իր մասնակցությունն ունենալու պատրաստակամության և հետագայում զինծառայության անցնելու կարևորության գիտակցման ձևավորմանը:**



2021- 2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում 1-9 դասարաններում սովորողների հետ դաստիարակչական աշխատանքները տարվել են հետևյալ հիմնական ուղղություններով՝

- **Միավորել սովորողների ուժերը, հայտնաբերել դժվար դաստրարակվող երեխաների և ԱԽ ուժերով տանել հետևողական վերահսկիչ աշխատանք**
- **Հայտնաբերել օժտված երեխաների և նրանց ընդգրկել արտադասարանական միջոցառումներում**
- **Կազմակերպել բազմաբնույթ գործունեություն՝ ճանաչողական, աշխատանքային, գեղագիտական, ռազմահայրենասսիրական, հոգևոր և այլն**
- **Ակտիվորեն մասնակցել համայնքային միջոցառումներին, ակցիաներին**

- Խթանել աշակերտական ինքնակառավարմանը՝ որպես դասարանական կոլեկտիվների կենսագործունեության կազմակերպման ձև
- Վերհանել սովորողների ելակետային դաստիարակվածության մակարդակը և կատարել դասղեկների հետփոփոխությունների վերլուծություններ:
- Կազմակերպել սովորողների հանրօգուտ աշխատանքներ
- Կազմակերպել դասղեկների հետ դասարանական այցելություններ պատմահայրենագիտական վայրեր, մշակութային կենտրոններ, ցուցահանդեներ և այլ վայրեր:
-

Սովորողների հետ պարբերաբար տարվել են հետևյալ աշխատանքները՝

- Ծանոթացում դպրոցի ներքին կարգապահական կանոններին
- Աշակերտների իրավունքների և պարտականությունների մասին նորմատիվ փաստաթղթի մասսայականացում
- Օրինակելի վարք ունեցող աշակերտներին խրախուսում
- Չառաջադիմող աշակերտներին աջակցություն
- ԱԽ նախագահական ընտրությունների կազմակերպում 6-9 դասարաններում
- ԱԽ հանձնախմբերի ստեղծում
- Մասնագիտական կողմնորոշմանը միտված հանդիպումների կազմակերպում
- Օգնություն ծնողներին երեխաների դաստիարակության հարցում
- Աշակերտ-դպրոց կապի ամրապնդում
- Անհարգելի բացակայությունների նվազեցում, ուշացումների բացառում և այլն:

Կից ներկայացվում է 2023- 2024 ուստարվա ընթացքում ԴԱ կազմակերպչի նախաձեռնությամբ և մասնակցությամբ դպրոցում կատարված միջոցառումները, հիշատակի օրերը:

1.	Գիտելիքի և դպրության օր	01.09.2023
2.	Աշակերտների հաճախելիության ստուգում, հաշվառում:	Կիսամյակի ընթացքում ըստ ՆԴՎ պլանի
3.	Դժվար դաստիարակվող երեխաների հաշվառում:	սեպտեմբեր
4.	Դպրոցի դասագրքային ֆոնդի պահպանության և աշակերտների դասագրքերով ապահովվածության մակարդակի ստուգումներ:	սեպտեմբեր
5.	Հայկական Կարմիր Խաչի Արարատի մարզի Մասիսի գրասենյակի հետ համատեղ իրազեկում ավարտական դասարաններում «Համաճարակային հսկողություն և պատրաստվածություն» թեմայով	08.09
6.	Հիշատակի օր և ծաղկադրում՝ նվիրված 44-օրյա պատերազմի տարելիցին	27.09
7.	ՀՀ անկախության տոն.	20.09
8.	Աշակերտական խորհրդի ընտրություններ. ԱԽ-ի նախագահի ընտրություններ	սեպտեմբեր
9.	Ուսուցչի տոն. Սփյուքահայ բարեկամների ընդունելություն	05.10
10.	1-ին դասարանցիներիր երդմնակալության արարողություն	19.10
11.	«Քո արվեստը դպրոցում»՝ հանդիպում համազգային թատրոնի դերասանուհի և գլխավոր բեմադրիչ Նարինե Գրիգորյանի հետ	19.10
12.	Աշակերտների ծանոթացում ներքին կարգապահական կանոններին, դրանց խախտելու դեպքում ձեռնարկվող միջոցառումներին	31.10
13.	«Երեխաների իրավունքների վերաբերյալ» պաստառի պատրաստում ԱԽ-ի սոցիալ-մշակութային հանձնախմբի կողմից Արարատի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հանձնարարականով	09.11-22.11
14.	Տեղական ժողովրդավարության դպրոցի կողմից կազմակերպված «Երիտասարդահեն համայնքի դիմացկունությունը կլիմայի փոփոխությանը» թեմայով 9-րդ դասարանցիների համար	11.11
15.	«Աուտիստիկ սպեկտորի խանգարում»-	

	սեմինար- վերապատրաստում առկա օնլայն	**08.12 13.12**
16.	**«Երաժշըությունը և մենք» համադպրոցական միջոցառում երաժշտության ուսուցչուհի Ն. Մակինյանի հետ համատեղ**	**15.12**
17.	**Վոլեյբոլի մրցույթ՝ նվիրված Ամանորին 9-րդ դասարանների միջև**	**21.12**
18.	**Անակնկալ դպրոցի արցախցի աշակերտների համար ԱԽ-ի նախաձեռնությամբ՝ փոքրիկ նվերներ Ամանորի կապակցությամբ**	**22.12**